34. ԲԱԶՐԿԱՆ ՈՒ ԿՆԿԱ ԽԱԲԱԾ

Կէղնի իրիկ ու կնիկ մ'ա։ Էդ կնիկ շատ ծանտր հիվընդութեն վըր ուրին կառնի։ Իրիկ դրսեն կիգա ու կհարցու, կխոսա, կասա.—

— Կնի՛կ, քզիկ ի՞նչ տեխ կցավա։

Կասա.—Մարդ, ես շատ ծանտր հիվանդ իմ։

Կասա.—Ի՞նչ բերիմ օր դու աղեկնաս։

Կասա.—Պըտի էրթաս Համտա քաղաք, բերիս ընձիկ Համտա շաքար։

Մարդ լէ կասա.—Քու խաթրի համար ես պտի էրթամ։ Հ'էլի փըշըմ ընձի հաց ու մաց պատրաստա օր ես էրթամ։

Ըստհաղ կնիկ հիվանդ ա, կտքտքա ու հաց ուր իրկան կպատրաստա։ Ութ հաց մարդու հ'առաջ կթխա ու կդրա զատ տան մեջ։

Մարդ դրսեն կիգա, կիշե օր կնիկ պառկած ա։ Կասա.—Կնի՛կ, չը՞ս աղեկցե։

Կասա.—Չէ՛, չըմ աղեկցե։

Կասա.—Կնի՛կ, զիմ հաց պատրաստե՞ր իս օր ես լուսուն էրթամ Համտա քաղաք։

Կնիկ կասա.—Պատրաստեր իմ ու հազըրվորի, հ'էլի, լուսուն ու գնա։

Մարդ ըստհաղ կթորկա կէրթա դուրս։

Կնիկ կէլի տքալեն ու դրսեն աթար կրերա, կբերա ութ հատ ու չախվով կբոլորցու, կմնա հար իրկուն։ Իրկուն ըստհաղ մարդ կիգա դրսեն, կասա.—Կնի՛կ, իմ հաց պատրա՞ստ ա, դիր մեշ տոպրկին, լուսուն ես էլնիմ ու իմ գործին էրթամ։

Կնիկն ու, իրկուն յոթ քաթեն կվերու կդրա, մեկը կհանա ու ղդուռ կկողպղե ու կբերե բոլորձուկ թիթրեսներ մըշ տոպրկին կգնա։ Ու ղէն մեկ ցորնե քաթեն կրերա վըր էրեսին կգնա։ Ըստհաղ իրիկուն կնիկ ու իրիկ խըտ իրար կքնին։ Կքնին ու լուսուն կէլնին։ Լուսուն, մարդ կէլնի, կասա.—Զիմ տոպրակ տուր, ես էրթամ իմ գործին, քզի Համտա շաքար բերիմ օր դու ուտիս ու լավնաս։

Մարդ կառնա։ ուր տոպրակ, կէձգե փիտից, կթալա պառեկին ու կէրթա։ Շատ կէրթա, քիչ կէրթա, մարթ մէ ռաստ կիգա։

Մարդ կասա.—Մարդն աստծո, դու հ՞ո՞ւր կէրթաս։

Կասա.—Կէրթամ Համտա քաղաք, շաքար բերիմ, իմ կնիկ ծանտր հիվանդ ա։

Մարդն կասա.—Մա՛րդ, մ՚էրթա, դու կնկա խաբած իս։

Կասա.—Դու խելա՞ր իս, մը՛ խոսա, իմ կնիկ հանդէ տուն հիվանդ պառկեր ա, էլավ իմ հաց պատրաստեց, ես էկա։

Կասա.—Օր թը չավադնաս, քու պառեկի հաց թիթրեն ա, դի գետին ու իշինք։

Կդրա գետին ու կիշա, կիշա օր ցորեն հաց ա, քաթա ա։

Կասա.—Հե՛յ, մարդ, հանդ է իմ հաց քաթա ա, դու խելար իս, գնա խրդ քու ճամբին։

Կասա.—Ըդ մեկ հացն ա, օր ցորեն ա, մըկէլ թիթրեն ա. օր չըս ավատնա՝ բաց աչքինք։

Մարդ կբանա, կիշե օր տկուն թիթրին ա, ու լավ մը կմտածա։

Ըդհաղ մարդ թիթրենին կթափա հ՚ոդի։ Իդախս կառնի բաղըրկան զինք ու զտոպրակ ու մեկ քաթեն ու կէրթա ծառի մե տակ։ Կնստին էրկուս խըտ իրար ծառի տակ։

Կասա.—Դո՛ւ, բաքլա, ես բաղրկան իմ, մկա իմ ձիանք, իմ դանգեր կիգան, ես քզի լավ մե կխոսամ։

Սահաթվան մե չափ կնստին, կխոսին։ Կիշին օր հանդե բաղըրկանի դանգիրն էկան։ Բամբակ բարձուկ ձիանքնու էկան։ Էկավ ըդտեխ ու ըդ ծառի տակ թափեց։ Նստան ու չայ սարքին ու խմին։ Մարդն ըսեց.—Դու կնկա խաբած իս, արի ես զքզի դնիմ մըշ իմ

բամբակին ու զշվի բերան կկարիմ ու էրթանք քու տուն դու ընձի նշանց տուր։

Չայ կխմին կփրցին, բաղրգան կվերու զմարդ կդրա մըշ բամբրկին, կրերա սուր չախու մէ մարդու ձեռք կդրա։ Ուր շըվի բերան կկարա, զաչիս տեղրանք կպորա շվալ ու կէլի բաղրկան ձիանք կբառնա ու կէրթա։ Կասա.—Մա՛րթ, էրթանք զքու տուն ցուցու ու կանինք։

Կէլին ու կիգան, գեղի մը հ'առեշ, ջվի մեջի մարդ կխոսա—Իդա իմ գեղն ա։

Կասա.—Օր թը քու գեղն ա, էրթանք զքու տուն ցուցու։

Մարդ կրերա ուր դռան վրեն կկանգցու։ Էն մարդ օր գացեր էր Համտա քաղաք շաքրի, ըդ կնիկ առեր էր զուր իրեք սիրող ու ներս մտեր էր ու զդուռ գոցեր էր։

Բաղրկան զդուռ զարկեց ու բոռաց.—Կնի՛կ, զդուռ բաց։

Կնիկ միջու գիհեն խոսաց.—Էդ ի՞նչ մարդ ա վըր դռան։

Մեկ լէ բաղրկան բոռաց.—Քուրիկ, զդո՛ւռ բաց։

Կնիկ ըսեց.—Դու ի՞նչ մարդ իս, քոփակ, հեռեցի իմ դռնեն, թը չէ՝ քըզի մափուս էնիլ կիտամ։

Մեկ լէ բաղրկան խոսաց, ըսեց.—Արի՛, դռան ծկի դիմաց խոսամ ու դու գնա։

Կնիկ էլավ շուտ մը էկավ։ Էկավ ու դռան ծկեն ու իշեց, իշեց օր բաղրկան կանուկ հ'ոդի ու ձիանք կանուկ դուռ։ Ուրախցավ ու չխոսաց, ըսեց.—Ի՞նչ կիտաս ընձիկ օր ես գուռ բանամ դու զքու ձիանք ներս բերիս։

Բաղրկան ըսեց.—Կիտամ քզի թալիս մի բամբակ, հինգ օսկի փարա, ես ըսօր պտի քու տուն մնամ։

Իդահախս կնիկ էկավ ու շուտ զդուռ բացեց ու բաղրկան զուր թալիսներ փողան թափեց, ու զէն մարդու թալիս մութ տեխ դրեց ու տարավ զուր ձիանք թավլեն կապեց ու դարձավ էկավ նստավ թալիսներու կուշտ, նստավ էն մարդու կուշտ, էն մութ տեխ ու խոսաց, թալիսի միջու մարդուն ըսեց.—Ա՛յ մարդ, իս քզի չընք խոսե օր իրեք մարդ հոս կա, օր դու 'կնկա խաբած իս, հանդե իրեք մարդ քու կնկա մոտ նստած ին։

Թալիսի միջի մարդն ըսեց.—Դու գնա՛, հ'ոնի ու բաքլա։

Մարդ գնաց հ'ոնի, ըսեց.—Քուրի՛կ, մրսեր իմ, իգամ թոնդրի խեչ ու դոլիմ։

Կնիկն ըսեց.—Գոլի՛ ու գնա՛, քու ջվրլներու մոտ պառկի, չէղնի օր թը հոս քնիս։

Բաղրգան ըսեց.—Քիչ մը գոլիմ ու էրթամ պառկիմ։

Իդահախ մարդ նստավ թոնդրա շուրթ ու գոլավ, էնիկ չուր զադ կպատրաստեր։ Պատրաստեց ու էփեց, սեղան դրեց ու ընդոնք իրեք խըդրաց նստան ու կերան։ Քիչմ՝ լէ էվելցավ, բաղրգնին տվեցին։ Դրին բաղրգնի հ՚առեջ, բաղրգան կերավ։ Ու վերցին սեղան ու հ՚ետ դրեցին։ Սորա էլան ըդ իրեք մարդ նստան ու ժղլան։

Ասին.—Հաց կերանք, փըրցանք, էլնիք քիչ մը մըզի խաղանք, քեֆ էնինք։

Էլան հ՚իրեք խըդ իրարու խաղցան։ Խաղցան, մարգեր ըսեցին ուրանց խաղեր։ Գլխուն մարդն ըսեց.—Ցարմ՝ ունիմ էղին դեղին։

Կշտի մարդ լէ ըսեց.—Որն օր տեսնա պատռի լեղին։

Կշտի մարդ ձենեց.

— Նա իմ յարն է, քու յա՛ր,

Մարդու յար ձեռ հաստատ բռնած է։

Իսդախ կնիկն ըսեց.—Իրիկմ՝ ունիմ թիթրե պաշար,

Գացե բերի Համդա շաքար.

Իգա բարով, չիգա բարով,

Ես կխաղամ ջուխտակ յարով։

Բաղրգան ըսեց.—Քուրի՛կ ջան, կաղաչիմ ես լէ կէլնիմ խաղամ։

Ըսեց.—Օր գինաս, էլիր ու խաղցիր։

Մարդն էլավ, բռնեց ու խաղցավ։

Ըսեց.—Կաղաչի՛մ, թողեք քընի մը խոսք ես կեսիմ, խաղցեք,—բաղրգան ասեց.

— Խագ՝ իս էդ խագերուն,

Զաչկերդ ի բաց դեմ ծակերուն,

Տես ինչ կէնա քու դրդոջ խանումմ՝

Հըտ յարերուն։

Իսդախ խարարի միչու ըդ կնկա մարգ հասկըցավ։ Լավ միանկանջ էնեց, մտածեց, ըսեց.

— Իմա՞լ էնիմ։

Հըմալ, ջըվլու միչու մարդ ըսեց.

— Ցա՛ հաց ու գինին, Տեր կենդանին։

Ըսեց ու ջվալ չախվով ծկեց, էլավ դուրս, քաշեց ուր կաբուռ ու էկավ, էկավ ու ըդ օրթալուխ կանավ։ Կնիկ օր տեսավ զուր իրիկ, ուշքաթափ էղավ ու պատավ գետին։

Մարդն ըսեց.—Ախպերնե՛ր, դուք նստեք, բաղրգան, դու մեկ կողմ կանի։

Էդ մարդերն նստան։

Մարդ հարցուց.—Հա՛յ ախպրտանք, դուք իմա՞լ եք էկի հոս։

Ըսեց.—Էկեր ինք ախպեր համար, նստեր ինք։

Ցարերուց էրկու մարդ խոսացին.—Հալա մեկ չխոսաց։ Իդահախս կնկան իրիկ մեկէլ մարդուց հարցուց, ըսեց.—Ախպե՛ր, դու ի՞նչ ապով էկեր իս հոս։

Ըսեց.—Դեմ աստծուն օր հարցուս, իմ յար ապով իմ էկե հոս։

Իստախ իրիկ դարձավ վըր կնկան։ Դարձավ իշեց կնկան։ Կնիկ ուշքընցուկ, պատուկ էր գետին։

Բռռաց կնկան.—Հ'էլի ու նստի։

Կնիկ հ'էլավ ու նստավ։

Մարդն ըսեց.—Իդա իրեք մարդուց ո՞ր մեկն ա քու ախպեր։

Կնիկն ըսեց.—Իդա էրկու մարդ իմ ախպերն ին։

Ըսեց.—Ինա մեկ մա՞րդ։

Ըսեց.—Չէ՛, իմ ախպեր չէ։

Մարդ ըդտեխեն թողեց ու էկավ բաղրգնի քով. էկավ բաղրգնի քով ու խոսաց։

Ըսեց.—Ընձի խելք մի սովրցու, էդ իմա՞լ էնինք օր ըդ մեկ մարդն ու կնիկ սպանինք։

Բաղրգան ըսեց.—Էրթանք ըդ էրկու մարդ օր ընդրա ախպրտիքն ին, դուրս էնինք։

Բաղրգան ու մարդ գացին խըդրար կանան հոդ։

Մարդն ըսեց.—Դու իդա էրկու ախպեր, օր քուլֆրթի ախպերն իք ճոկվեք իրարուց ու գացեք դուրս։

Ըդ էրկու մարդ հ'էլան ու գացին։ Էն մեկ մարդ մնաց նստուկ։ Հազմ' լէ բաղրգան ու թալսի մեջի մարդ խոսացին։

Բաղրգան ըսեց.—Ի՞նչ տեսակ պտի էնիս էդ էրկուս։

Ըսեց.—Էրկսին լէ սպանինք։

Իդա մարդն ըսեց.—Նա՛ սպանինք, նա՛ բան, էրթանք դատարան։

Հ'էլան խըդ իրար դատարան կանան ջուխտկով։ Ջմարդն ու կնիկ թողեցին ներս։ Իստախ դատարանի դուռ գացին ու կանան

ըդ էրկուս։ Իդահաղ նէրսից մարդ մէ էկավ ու հարցուց.—Հ՚ո՞րի իք կանե իդա դատարանի դուռ։

Ըսից.—Էկեր ինք, էրկու մարդ պտի տանինք դատինք, կէրթանք դատարանի մոտ։

Գացին կանան դատարանի հ՚առեջ, էդ մարդն օր դատ կէներ։

Դատավորն ըսից.—Հա՛յ ախպրտանք, հ՚ո՞րի իք էկի կանի հ՚ոդի, գործ ի՞նչ է։

Բաղրգան խոսաց, ըսեց.—Էկեր ինք, կնիկ ու մարդու մի համար օր դատ էնիս։

Դատավորն ըսեց.—Ձէգ էրկսի գլխու գալած խսա էնեք օր ես դատ էնիմ։

Իստախ բաղրգան ինչ օր էղեր էր ընդրանց գլոխ, մեկիկ-մեկիկ խսա էրեց։ Իդհախ դատավորն ըսեց.—Գացեք բռնեք ու բերեք հոս։

Գացին, բռնին, բերին ու դատավորի հ՚առեջ կանգըցին։ Բերին հ՚ոդի, դատավոր ըսեց.—Գացեք իմ մշկներուց էրկու հատ առեք բերեք։

Գացին բերին էրկու հատ կանգըցին ուր հ՚առեջ։

Դատավորն ըսեց.—Գացե՛ք զէրկու քհել ձիանք առեք ու էկեք։

Գացին ու զէրկու ձին բերին ու կանգըցին դատավորի հ՚առեջ։

Դատավորն ըսեց.—Տարե՛ք, զէրկու ձին կանգըցեք դուրս։ էկեք կնիկն ու մարդ տարեք, կապեք ձիաներու պոչ։

Դատավորն հ՚էլավ դուրս ու ձիաններուն մոտ։ Տարան կնիկ կապեցին մեկ ձիու պոչ, իրիկ կապեցին մեկ ձիու պոչ։

Մարդն գնաց ու ձիաններուն խոսաց ու ըսեց.—Տանիք զէդ էրկու մարդ սար զարկիք, ձոր զարկիք։ Փունջ մը մազ գլխուց առնեք ու գաք, իգաք ձեր պոչ Մեղրագետին մեջ լվաք ու գաք։

Ձիանք տարան զարկին սար ու ձոր, զուրանց պոչ Մեղրագետին մեջ թաթխեցին ու էկան կանան դատարանի հ՚առեջ։

Դատավորն խոսաց էրկու մարդուն, ըսեց.—Ձեր գործ մաքրավ, հ՚էլեք գացեք ձեր տներ։

Հ՚էլան ու էկան տուն։ Մարդ հանեց ու բաղրգանի քիչ մը փարա տվեց։

Բաղրգան ըսեց.—Ես չըմ առնի քու փարեն, թը քի էղնի։ Գնա մտածի թը աշխար ի՞նչ կա։

Գացին նստան հ՚ոդի, կերակուլ կերան։ Իրիկուն իրարու քովէ խըտ իրարու պարկան։ Լուսուն խըտ իրար շուտ էլան։

Բազրգան ըսեց.—Դու կէնաս բարով, տունդ տեղեն կենա, ես կէլիմ կբառնամ իմ բամբրկներ ու էրթամ խասնիմ իմ օզլուշաղին։

Հ'էլավ բարձավ ու գնաց։

Մարդ հ'էլավ տարավ զբազրգան գեղեն հանեց ու դարձավ էկավ։

Էկավ նստավ ու լավ մտածեց ուր էրած գործերն։